

Ներսէս հայոց կաթողիկոս և Մերչապուհ Տարաւնու և Մամիկոնէից եպիսկոպոս, Գրիգոր անպահանջ զնդին եպիսկոպոս, Պարդև Հարբայ եպիսկոպոս, Տիրակ Բազրեանդեայ եպիսկոպոս, Գրիգոր Բառենոյ եպիսկոպոս, Ներսէս Մարգարոյ եպիսկոպոս, Վաղոտ Արշամունեայ եպիսկոպոս, Պետրոս Սիւնեայ եպիսկոպոս, Գրիգոր Արծրունեայ եպիսկոպոս, Մարկոս Բազրեանդեայ եպիսկոպոս, Մաշտոց Խոռխոռունեայ եպիսկոպոս, Յոհան Ապահունեայ եպիսկոպոս, Աբղիսոյ ատորեայ ուղղափառաց եպիսկոպոս, Յովնան Վանանդայ եպիսկոպոս, Հաւուկ Արշարունեայ եպիսկոպոս, Քրիստափոր Պալունեայ եպիսկոպոս, Յոյս Գողթան եպիսկոպոս, Թադէոս Մեհենունեայ եպիսկոպոս, և ամենայն եպիսկոպոսունք հայոց աշխարհիս, իշխանք, Համապատրի Ի Բուզվառաման, ի տանէ Մամիկոնից, Գարջոր հայոց Մաղխազ, Սամեղ յարդատաւասդան սպարապետ, Գրիգոր ի Հմայեական, Սահակ ի Վարդանան, Աստուածատուր Վանանդայ տէր, Դատոյ ի Գարջուղեան, Գրիգոր և Վարդան ի Վասակայ, Ջաւրակ ի Գլաւունան, Վարադ Յոհան ի Յոհանան Վարդան ի Մուշեղեան, Համապատր, Սահակ ի Հմայեական, Գնեալ Գնունի, Վարադ Գաբեղեան, Գրիգոր Աբեղեան, Մերչապուհ ի շինական, Համապատր Զինականեան, Աստուածատուր Հաւենունի, Արշոտ ի Վարադ տիրոցեան, Մուշեղ ի Հմայեական, Վրիա յԱրտաշրան, Աստուածատուր Արշարեան, Սամուեղ Իմամական, Վաթ ի Հմայական, Ներսէս Սամսունեան, Վարդան Վահեունի, Հմայեակ Վարաթունի, Մանուեղ Սպանդունի, Վարդ և Արտաւազդ ի Մամական, Համապատր Սահական, Սահակ ի Մանուեղեան, Վարդան ի Մուշեղեան, և ոչ որ արտաքոյ մնաց յաշխարհականաց ի յայս ի կամաւոր գործոյ, ի քահանայից, ի վանականաց, ի ժողովրդականաց, ի բարեստանից և յամենայն շինականաց, և բարձաք ի միջոյ զնոցա կրճիմն չար, ի լոյս խաղաղական ողբոյ և մարմնոյ, Եւ սահմանեցաք ըստ հրամանի սուրբ առաքելոցն և երանելի ուղղափառ՝ ամենեկմբ մի՛ վիճել ընդ նոսա հակառակաբանութեամբ, այդ հեռանալ ի նոցանէն արդարեւ որպէս ի թշնամեայ Քրիստոսի Աստուծոյ, և մեզ կալ ինմին ուխտի հաստատուն, որպէս արարաք և գործեցաք հանգերձ Աստուծոյ, յաղազս սրբոյ հաւատոյ խոստովանութեան, Ապա թէ իցէ որ որ սոյթաքիցէ ի մէնջ կամ ի դաւակէ, և կամ ի զաւակաց զաւակէ մերմէ մինչև յաւիտեան, և կամիցի թիւրեւ և դառնալ յուխտէ հասարակաց, և խորհիցի առնել ինչ ընդդիմութիւն կամակոր մտաւք, բանիւ և կամ գործով հաւանել երեք միւսանգամ (ի) շինութիւն քանդման աւերեցելոյն միաբանեալ նետորդիանո-

սաց, և հեռանալ ի մէնջ այսու մասամբ, և արեալ զանձն յետս կալով ի մեծ խորհրդոյ քրիստոնէութեան՝ նզովեսցի հոգւով, նզովեսցի մարմնով աղմնայն կենցաղիւ իւրով ի սուրբ Երրորդութենէն և որոշեալ լիցի հալածանաւք, և արտաքս ընկեցեալ լիցի յամենայն ուղղափառաց՝ ի ժամանակի դիպեցելոյ, նովին անիծիւք՝ եթէ ի կաթողիկոսաց որ իցէ, եթէ յեպիսկոպոսաց, եթէ ի քահանայից, եթէ յիշխանաց, եթէ յայլ ժողովրդականաց, եւ արարաք զայս հաստատութիւն պատուիրանի մեզ և որդւոց և որդւոց որդւոց մերոց մինչև ի կատարումն ժամանակաց, և կնքեցաք առաջին սրտիւք մերովք յուսովն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, և ապա մատանեալք մերովք:

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ՕՐԹՈՒՌՈՒՄ ԵԿԵՂԵՑԻ.

ՌՈՒՍԱՅ ԵԿԵՂԵՑԻ

Ռուսաց եկեղեցական թերթերի մէջ միշտ նշանաւոր տեղ են գրաւում ռուս միսիօնարներէ գործունէութեան վերաբերեալ խնդիրներ: Այդ միսիօնարներէ քարոզչութեան ասպարէզը պէտք է ասել շատ ընդարձակ է. նոքա մի կողմից քրիստոնէութեան լոյսը պիտի արածեն Ռուսաստանի բազմաթիւ մանր հեթանոս ցեղեցի մէջ, միւս կողմից ստիպուած են անընդհատ մաքառելու ռուս աղանդաւորներէ քարոզչութեան դէմ: Միսիօնարներէ գործունէութեան յաջողութեան նըպաստելու համար պարբերաբար զանազան թեմերում ժողովներ են գումարուում, որոնց նպատակն է ցոյց տալ օրթոդոքս առաքելութեան կարիքները և միջոցներ այդ կարիքները լցուցանելու:

Церк. Вѣстн. հազարդում է որ վերջերս Վիատկայի միսիօնարական յանձնաժողովի ընդհանուր նիստում կարդացուել է մի զեկուցում, որից երևում է, որ չերեմիսների մէջ շատ դանդաղ է տարածուում քրիստոնէութիւնը. օրթոդոքս միսիօնարները ստիպուած են խոստովանելու որ հեթանոսական ձգտումները նոցա մէջ այնքան զօրեղ են, որ քրիստոնեայ դարձած չերեմիսները միայն առ երեսու կատարում են եկեղեցական ծէսերը, իսկ իրօք նոյն հեթանոսներն են, Այս երևոյթի առաջն առնելու դիտարոր միջոցն է համարուում չերեմիսների համար այնպիսի քահանաներ կարգելը, որ նոցա լեզուն իմանան և կարողանան այդ լեզուով ժամ ասել:

մինչդեռ այժմ քահանաներից շատ քչերը կարող են հասկանալ իրենց ծխականների լեզուն և խօսել նոցա հետ իրենց մայրենի լեզուով:

Միևնոյն երևոյթը նկատուում է և Սամարայի թեմում չուվաշների մէջ:

— Արարատի անցնալ տետրակներէց մէկում մենք յիշատակել էինք այն քանակուիւք, որ տեղի ունի մայրաքաղաքի թերթերի մէջ ռուսաց ծխական քահանաներ կարգելու եղանակի մասին: Спб. Вѣд. լրագրի մէջ պաշտպանուում էր այն միտքը, թէ քահանաներ ընտրելու իրաւունքը պատկանում է ծխականներին և թէ ժամանակ է արգէն այդ իրաւունքը վերադարձնել ժողովրդին: Перк. Вѣстн. պաշտպանում է քահանաներ կարգելու այժմեան եղանակը: Կնիւզեւոյ թէ ռուս ժողովուրդն այնքան դեռ չէ հասունացել, որ կարող լինի կողմնակի հաշիւներից ազատ իւր համար արժանաւոր հովիւներ ընտրել, մանաւանդ գիւղերում ճարպիկի մէկը օղիի ուժով կամ այլ հնարներով հեշտութեամբ կարող է իւր ընտրութիւնը գլուխ բերել: մինչ նա գուցէ բնաւ զուրկ է քահանայ դառնալու արժանաւորութիւններից:

— Ռուսաց եկեղեցական թերթերում ցանկութիւն է յայտնուում, որ ժամակարգութեան վերաբերեալ գրքերը քննուին ու սրբագրուին լեզուի տեսակէտից: Բանն այն է որ այդ գրքերի թարգմանական լեզուն տեղ տեղ այնքան մութն է և անհասկանալի որ նոյն իսկ մասնագէտները միայն ճազգրների հետ համեմատելով կարող են ըմբռնել այդ մութն ընթերցուածների իմաստը:

— Մայրաքաղաքի լրագրներում շատ է խօսուում այժմ նաև ռուսաց հոգևոր դպրոցների բարեփոխութեան մասին: Ի միջի այլոց առաջարկողներ կան որ այդ դպրոցների ծրագրներից հանուի հին լեզուների դաստառութիւնը, որ աւելորդ բռն է համարուում գիւղական ժողովրդի քահանայ դառնալ ցանկացողների համար: Եկեղեցական թերթերը հակառակ են այդ առաջարկութեան: անհրաժեշտ համարելով յունարէնի և լատիներէնի ուսումը հոգևոր կրթութիւն ստացողների համար:

ԿԱԹՈՒԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ.

Հռոմից հաղորդում են որ վերջերս ի պատիւ այնտեղ գումարուած քրիստոնէական հնագիտութեան համաժողովի անդամների եկեղեցական շքեղ հանգէս է կատարուել Դոմինգիլայի կատակոմբներում, իսկ երեկոյեան միառաւոր ընդունելութիւն է տեղի ունեցել Լատերանի պալատում: Վատակոմբների տաճարը զեզեցիկ դարձրուած է եղել կանաչով ու ծաղիկներով, ժա-

մասացութիւնը կատարել է կարգինալ Սատուլին: Լատերանի պալատի երեկոյեան հանգէսը, կարգինալների, արքեպիսկոպոսների, պալատական անձանց և կանանց մասնակցութեամբ, զուտ աշխարհիկ բնաւորութիւն է ունեցել: որ առաջին անգամն է տեղի ունենում պապի պալատում՝ սկսած 1870 թուականից:

— Հռոմում Տրանտեներէի ս. Յեցիլիայի տաճարում պեղումներ են կատարուում պապի քարտուղար կարգինալ Ռամպոլլայի ծախքով: Տաճարի յատակի տակ դանուել են հին հռոմէական տան մնացորդներ. շինութեան մէջ մի քանի աւազան կայ, որ ցոյց է տալիս ըստ երևութիւն թէ այդ տանը լողաբան է եղել: Այս նոր գիւտը հաստատում է այն աւանդութիւնը, թէ ս. Յեցիլիայի տաճարը կառուցուած է այնտեղ, ուր առաջ նահատակ կոյսի տունն է եղել:


ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ.

Մի ամերիկական եկեղեցական թերթում ամերիկացի բողոքական քարոզիչներից մէկը մի նամակ է հրատարակել «Բողոքականութեան սընտնկութիւնը» վերնագրով: Այդ նամակի մէջ հեղինակը հաւատացնում է որ իւր քարոզչութեան ասպարէզ եղած տեղերում (Լօն—Ալէքս. Միւնեսօտ: Նիւ—Եօրկ և Նի) ինքը յաճախ նկատել է, որ չափահաս ընակիչների մի հագին տոկոս մկրտուած չէ: Հեղինակն առում է թէ երբեք չէ լսել, որ «աւետարանի քարոզիչները» երբ և իցէ խօսում են մկրտութեան անհրաժեշտութեան մասին:

Հեղինակի կարծիքով բողոքական քարոզիչները խոյս են տալիս մկրտութեան և հաղորդութեան խորհուրդների մասին խօսելուց, որովհետև չեն հաւատում իրենք կամ չեն հասկանում այդ խորհուրդների նշանակութիւնը ճշմարիտ քրիստոնէի համար: «Բողոքական քարոզիչներն այժմ չեն համարձակուում ամբողջ աւետարանը քարոզել, որովհետև նոքա ընտելացրել են ժողովրդին արհամարհանելով վերաբերուել աւետարանի հիմնական ճշմարտութիւններին»:

— Լրագրներն հաղորդում են մի շատ նշանաւոր գիւտի մասին, որ կատարուել է Եգիպտոսում. այդտեղ գտնուել է մի հին պապերու ձեռագիր, որ պարունակում է մինչև այժմ միայն աննշան հատուածներով յայտնի «Աւետարան առ Եգիպտացիս»: Սորա հեղինակ համարուում է Գեառնոս: Գերմանացի գիտնականներն ահադին նշանակութիւն են տալիս այս նոր գիւտին և այդ գիտնականների թիւումն են Հայեգելբերգ, Հմիլդը և Եակոբի (Սարաբուրգի համալսար.) հեղինակաւոր հնագէտները: նման անձինքը նոքա զբաղել են յիշեալ աւետարանից միայն երկու երես:

այն էլ պատահում: Այդ հատորը գրում է խրատերէն. Մի էջում պարունակում է Փրկչի աղօթքը և խօսակցութիւնը աշակերտների հետ: Այդ հատումում պատմում է ըստ երևութիւն Քրիստոսի Վեթիւմանի պարտիզում աղօթելը նման Մատթէոս, Մարկոս և Ղուկաս աւետարանիչների պատմածին: Պատմադն ահանատես մարդ է, և որովհետեւ Վեթիւմանի պարտիզում Յիսուսի հետ եղել են միայն Պետրոս, Յակոբոս և Յովհաննէս առաքեալները, ուստի ենթադրում են որ այդ աւետարանը կարող է պատկանել առաջին երկու առաքեալներից մէկին ու մէկին:



ՄԵՐ ԳԵՐՈՒ ՄԵՆԵԼԱՅՏԱՐԱՆԻ ԳՆՈՒԹԵԼՆԵՐԸ.

ՀԱՆՍ ԿՈՐԶԻԷՐԴ

H. Kaarsberg

(Politiken—մայիսի 25, 27, 29 և յունիսի 1, կամ № № 145, 147, 149 և 142).

Մի անգամ Տուրքիան ասել է. «Ես սիրահար եմ Եւրոպայի, կամ աւելի ճիշդ է ասել, եւրոպական գաղութարարութեան, որ այսօր մեղանում (Պուստոսանում) կատակի և հեղուկեան նիւթ է համարվում: Ես պաշտօղ եմ քաղաքակրթութեան,—այո՛, այս բառն աւելի լաւ է: Քաղաքակրթութիւնը հատկանշալի դադարաւոր է, մարդը և սուրբ է, իսկ միւս բոլոր ձայները, զոր օր, աղգութիւն, փառք, մեծութիւն՝ բուրում են արեան հոտ...»

Երբէք չեմ մոռանայ 83-ի մի գեղեցիկ աշնան առաւօտ Բուդա—Պեշտում: Մեծ իրարանցում կար փողոցներում, լրագրիւնները ձեռքէձեռք էին անցնում, ամէն կողմից լալում էր, թէ «Եւրոպան» մեծ կորուստ է կրել, թէ Իւան Տուրգենեւը մեռել է, թէ միակ է նա-Իւան Տուրգենեւը. ամբոյնի ցուակցութիւնը անկեղծ էր, շարագոյծ բոթը տարածվում էր, ստուարանում էր...:

Ժամանակները փոխուեցան: Հիմայ «Եւրոպական քաղաքակրթութիւնը» այլ ուղղութիւն է ստացել. եւրոպական մեծ մեծ պետութեանց քաղաքակրթութիւնը զգոյշ և խոհեմ է ընթանում: Մենք տեսնում ենք ամէն տեսակ դալթակցութիւն, ճնշումն աղգերի, հրեաների հալածանք, Տաճկաստանի կոտորածք, «Ելլանսապետի» և «Ժողովրդեան» յարատեւ հակառակութիւն և կռիւ... Եւրոպան զգոյշ է: Այս ամէնը կատարվում է կեղծ բարեպաշտութեամբ, սկզբունքների անունով, ամէնից աւելի Փարիզի տաճարներից, այնպէս որ «Եւրոպայի» քաղաքակրթութեան, աղմուկի և ցուցահանդիսի մէջ էլ չի լսվում հայոց աղգի աղետորով ճէշը...:

Իշխանների խցեցէք ձեր ահանջը անուշաբոյր բամբակով: Նուս կացէք կարող հրապարակաբանների, կարեւորութիւն մի՛ տար այս մարտիկների որոտածմէի աղաղակին: Հանգիստ կացէք, մինչև որ վերջապէս մի օր «Եւրոպայի» համար անտանելի դառնայ այս բեռը: Եւ այդ օրն անշուշտ կը հասնի, երբ որ ամբոյնը բաց կանէ իւր աչքը և կը տեսնէ, թէ «Եւրոպան» կարողանում է անտարբերութեամբ տանել այս ամբօթ, երբ որ ժողովրդեան սրտի մէջ կը մեռնի այն «հատար», «կործան» որ նա դաւանել է Տուրքիանի կենդանութեան ժամանակ:

Ամէնքը կը յեշեն, թէ ինչպէս հայերը խումբ խումբ որի մասնուեցան դիւտիան անդթութեամբ, որ անհնարին է նկարագրել թանաքով: Այս կոտորածի սկիզբը «Եւրոպայի» համար անշուշտ մնաց: Բայց 1880-ին, երբ որ սուլթանը քրդերից համդիկէ հեծելազոր կազմեց, աշխարհածանօթ եղան հեղինակաւոր պաշտպանութեամբ կատարում աննպատակ սպանութիւններ, առեւանգութիւն, անմարդկային դադանութիւն: 90—96 թուականներում հազարաւոր և բիւրուր անմեղներ և անդէններ սպանուեցան, ապահանուեցան, մարտերոտացան, անլուր զրկանքների հանդիպեցան սուլթանի հրամանով, որովհետեւ «Եւրոպայի» մեծ պետութիւնները անգործ նայում էին այդ տեսարանին:

Անգործ... այո՛, մենք վկայ ենք, որ Եւրոպայի բանակցութիւնը Դրան հետ—կատարեալ խեղկատակութիւն և խայտառակութիւն էր: Բայց այս պատմութիւնը երկար է—կարգացէք Գողէի «Հայերի հալածանք», 1897-ին Նեո—Շառտեւում տպագրածը և անգլիական «կապոյտ զբօսը»:

Ո՛ւր է այնքան ժամանակ, որ բոլորը գրուի, ինչ որ Տաճկաց տէրութիւնը գործել է անգէն ժողովրդեան դէմ: Թէ ինչ դնով գնեցին մեծ պետութիւնները «աշխարհի խաղաղութիւնը», յիշատակներ միայն մի քանի բան: հազարից մէկը...

1890-ի կոտորածը անհաւատալի չափ ստացաւ. քրդերը կողոպտում, այրում, հունձը ոչնչացնում, առեւանգում, ընդգրկմացողին սպանում էին, անպաշտպանին դերի էին տանում: Իսկ աղերսագրերի դէմ սուլթանից հրաման էր դալիս, որ իւր «համիտիէի» մասին բողոքները լռեն:

93—94-ին սովի պատճառով տաքառութիւնը նորից սկսուեցաւ և հայերի բնակութեան տեղը ըսնելու եկան քրդերն ու չեքեքները սրով և մէջբով: Բուլանիսի և Մուշի սոսիակի աղետներով 10000 մարդ կողոպտուեցան: 94-ին Սասունը արեան մէջ ողողուեցաւ: Անգլիական հիւպատոսին յայտնի էր, որ այս բոլորը լարուել է սուլթանի օրոգայթով. խնդրում էին նորա մը-